



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2111/02/13
Նախագահող դատավոր՝ Կ. Սադյան
Դատավորներ՝
Լ. Ավանեսյան
Հ. Գրիգորյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2111/02/13թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

16 փետրվարի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Վ. Հովսեփյանի
Ի. Կարապետյանի
Ա. Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Իննա Բեհբուդի Մելքունյանի ընդդեմ Վաչե Վալերիի Բաբայանի, Աշխեն Վոլոդյայի Սիլանյանի, ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի, ԼՂՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի պետնոտար Գայանե Մեյրանյանի՝ համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու, նվիրատվության պայմանագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ պատասխանողներ Ա. Սիլանյանի և Վ. Բաբայանի ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Գործի դատավարական նախապատմությունը

Իննս Բեհրուդի Մելքումյանը 2013 թվականի նոյեմբերի 12-ին հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Վաչե Վալերիի Բաբայանի, Աշխեն Վոլոդյայի Սիլանյանի, ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի, ԼՂՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի պետնոտար Գայանե Սեյրանյանի՝ Ստեփանակերտ քաղաքի Վ. Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանի նկատմամբ Վաչե Բաբայանի հետ իր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու, Վ.Բաբայանի և Ա.Սիլանյանի միջև նշված բնակարանի նկատմամբ կնքված նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված Ա.Սիլանյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 4-ի վճռով /դատավոր՝ Մ. Ավանեսյան/ հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2014 թվականի մայիսի 13-ի որոշմամբ /դատավորներ՝ Լ. Ավանեսյան, Շ. Գրիգորյան, Ն. Գրիգորյան/ հայցվորի կողմից 2014 թվականի մարտի 26-ին բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 4-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 22-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի օգոստոսի 20-ի որոշումներով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և գործի վարույթը կասեցվել, իսկ 2014 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և գործը նշանակվել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի փետրվարի 13-ի վճռով /դատավոր՝ Ռ. Ջհանգիրյան/ հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2015 թվականի փետրվարի 27-ին հայցվոր Ի. Մելքումյանը բերել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 7-ի որոշմամբ /դատավորներ՝ Շ.Խաչատրյան, Լ.Ավանեսյան, Շ. Գրիգորյան/ բավարարվել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի փետրվարի 13-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունիսի 15-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի վճռով /դատավոր՝ Շ. Հարությունյան/ հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ բավարարել է 2015 թվականի հոկտեմբերի 15-ին հայցվորի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝

Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է. Իննս Բեհբուդի Մելքումյանի հայցը բավարարել է. ճանաչել է Իննս Բեհբուդի Մելքումյանի համատեղ սեփականության մասնակցի իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Վ. Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանի նկատմամբ ու անվավեր ճանաչել Վաչե Վալերիի Բաբայանի և Աշխեն Վոլոդյայի Սիլանյանի միջև 2013 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված ու Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի պետնոտարի կողմից վավերացված նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը և 2013 թվականի հոկտեմբերի 15-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-6 մատյանի 154795 համարի տակ կատարված Աշխեն Վոլոդյայի Սիլանյանի սեփականության իրավունքի գրանցումը:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին պատասխանողներ Ա. Սիլանյանի և Վ. Բաբայանի ներկայացուցիչ Ա. Մադաթյանը բերել է վճռաբեկ բողոք:

Գերագույն դատարանի 2016 թվականի հունվարի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների, ինչպես նաև օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու հիմքերով:

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի, 172-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, սխալ է մեկնաբանել ու կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի /բողոքում սխալմամբ նշված է 401-րդ հոդվածը/ պահանջները, պետք է հիմք ընդունել <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներն ու մերժել վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ դատարանը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի սխալ կիրառման արդյունքում կայացրել է անօրինական և չհիմնավորված որոշում, որի արդյունքում պատասխանողների համար առաջացել են ծանր հետևանքներ:

Նշված պնդումները բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իրավական գնահատականի չի արժանացրել գործին կցված քաղաքապետարանի կողմից կցակառույց իրականացնելու աշխատանքների կատարման համար Աշխեն Սիլանյանին տրված նոր շինարարության թույլտվությունը, ըստ որի կցակառույցի շինարարական աշխատանքների ավարտման վերջնաժամկետ է սահմանված 2016 թվականը ներառյալ:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով գործով իրականացված փորձաքննության տվյալները /բնակարանի շուկայական արժեքը առ 11.10.2010թ. դրությամբ կազմել է 9.550.000 ՀՀ դրամ/, անտեսել է 2009 թվականի վիճելի բնակարանի առուվաճառքի պայմանագիրը /որում բնակարանի շուկայական արժեքը նշված է 12.500.000 ՀՀ դրամ/:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, ի խախտումն <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների, հայցվորի սեփականության իրավունքը ճանաչել է այնպիսի մի շինության /չգրանցված կցակառույցի/ նկատմամբ, որի իրավունքը չուներ մինչև անգամ նրա ամուսինը:

Բողոքաբերը չի վիճարկում, որ կողմերի և վկաների ցուցմունքներով հաստատվել է և որպես անհերքելի փաստ ընդունվել, որ բնակարանը գնելուց հետո կատարվել են շինվերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցվել է կցակառույց, որի կառուցումը դեռևս իր ավարտին չի հասցվել: Ընդ որում, բնակարանի վերանորոգման աշխատանքների զգալի մասը կատարվել է մինչև կողմերի ամուսնանալը, իսկ մյուս մասը և կցակառույցի աշխատանքները կատարվել են համատեղ ամուսնական կյանքի ընթացքում: Ըստ բողոքի՝ դատարանն անտեսել է, որ այդ աշխատանքների ծավալն ու արժեքը չեն կարող բավարար լինել բնակարանի արժեքի զգալի չափով ավելացման համար և նույնիսկ, եթե հիմք ընդունենք փորձագետի կազմած ոչ արժանահավատ եզրակացության տվյալները /1.720.000 ՀՀ դրամ/, ապա դա չի կարող գնելու պահին 12.500.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող բնակարանի արժեքը նշանակալի չափով ավելանալու հանգամանք ճանաչվել:

Բողոքաբերի կարծիքով՝ ստորադաս դատարանը հաշվի չի առել <<Իրավական ակտերի մասին>> ԼՂՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջները և նշված իրավական նորմատիվ ակտը մեկնաբանել է այնպես, որ այդ մեկնաբանությամբ փոխվել է դրա իմաստը: Այսինքն՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները կիրառելի են միայն այն դեպքում, երբ կատարված աշխատանքների արդյունքում բնակարանի արժեքը զգալի չափով ավելանալով հանդերձ, անհրաժեշտություն չի առաջանում իրավունքի գրանցման և միավորի հաշվառման համար: Ուստի, դատարանը չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ կցակառույցը, որպես նոր ստեղծված գույք, չունի սեփականատեր և որպես գույքային միավոր հաշվառված չէ ինչպես բնակարանի հետ միասին, այնպես էլ առանձին: Վերաքննիչ դատարանը իրավաբանորեն չի անդրադարձել այն հարցին, թե անշարժ գույքի նկատմամբ ամուսիններից մեկի սեփականության իրավունքի բացակայության պարագայում հնարավոր է արդյոք ճանաչել մյուս ամուսնու համասեփականության իրավունքը:

Ըստ բողոքի՝ այլ մոտեցում կլիներ, եթե հայցվորը ներկայացներ գումար բռնագանձելու մասին պահանջ:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքում հիմնավորվել է նրանով, որ Գերագույն դատարանի որոշումը կապահովի օրենքի միատեսակ կիրառությունը, դրա ճիշտ մեկնաբանումը և կնպաստի իրավունքի զարգացմանը, և որ բողոքարկված դատական ակտի կայացման արդյունքում բողոքաբեկների համար առաջացել են ծանր հետևանքներ, այն է՝ նրանք զրկվում են 12.500.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող անշարժ գույքից /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը/:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբեկը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը, փոփոխել այն, կայացնելով նոր դատական ակտ՝ հայցապահանջը մերժելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման թիվ 095475 վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12՝ 58.22 քմ մակերես ունեցող բնակարանի նկատմամբ թիվ 1938 առ 16.09.2009թ. առուվաճառքի պայմանագրի հիման վրա 02.10.2009թ. գրանցվել է Վաչե Վալերիի Բաբայանի սեփականության իրավունքը /հատոր 1-ին, գ.թ.8-9/:

2. ԱԲ 008025 ամուսնության վկայականի համաձայն՝ Վաչե Բաբայանի և Իննա Մելքումյանի ամուսնությունը գրանցվել է Ստեփանակերտի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում 2010 թվականի հոկտեմբերի 11-ին /հատոր 1-ին, գ.թ.14/:

3. <<Ղարաբաղ Տելեկոմ>> ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 14-ին տրված տեղեկանքի համաձայն՝ Իննա Մելքումյանը 2009 թվականի փետրվարի 1-ից առ այսօր աշխատում է <<Ղարաբաղ Տելեկոմ>> ՓԲԸ-ի Գլխամասային գրասենյակի զանգերի կենտրոնի ստորաբաժանումում՝ որպես գործակալ, և նրա ամսական աշխատավարձը կազմել է 125.000 ՀՀ դրամ: Նա 2012 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև 2014 թվականի օգոստոսի 26-ը ներառյալ գտնվելու է հղիության և ծննդաբերության արձակուրդում /հատոր 1-ին, գ.թ. 15/:

4. Ստեփանակերտի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1783Ա որոշման համաձայն՝ Վաչե Բաբայանին թույլատրվել է Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանին կից իրականացնել կցակառույց /հատոր 1-ին, գ.թ.16/:

5. Շինարարության թույլտվության և կցակառույցի նախագծի համաձայն՝ 2012 թվականի օգոստոսի 17-ին Ստեփանակերտի քաղաքապետի կողմից Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանին կից կառույցի կառուցման աշխատանքները կատարելու համար Վաչե Բաբայանին տրվել է թիվ 325 շինարարության թույլտվությունը /հատոր 1-ին, գ.թ.17-27/:

6. Բնակարանի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ 2013 թվականի հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12՝ 58.22 քմ մակերես ունեցող բնակարանի նկատմամբ Վաչե Բաբայանի և Աշխեն Սիլանյանի միջև կնքվել է նվիրատվության պայմանագիր /հատոր 1-ին, գ.թ.13/:

7. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ 2013 թվականի հոկտեմբերի 15-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-6 մատյանի 154795 համարի տակ կատարվել է Ա.Սիլանյանի սեփականության իրավունքի գրանցումը Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12՝ 58.22 քմ մակերես ունեցող բնակարանի նկատմամբ /հատոր 1-ին, գ.թ.10/:

8. Կողմերի և վկաների ցուցմունքներով հաստատվել է, որ նախքան ամուսնանալը վիճելի բնակարանի գնման համար հայցվորի տատ՝ Նորա Բաբայանից վերցված 4 մլն ՀՀ դրամ գումարը նրան է վերադարձվել հայցվոր Ի.Մելքումյանի և պատասխանող Վ.Բաբայանի ամուսնության ընթացքում, որ կողմերի ամուսնության ընթացքում վիճելի բնակարանում կատարվել են վերանորոգման աշխատանքներ և կառուցվել է կցակառույց, որ հայցվորի մայրը վիճելի բնակարանի վերանորոգման համար տվել է 800.000 ՀՀ դրամ, իսկ հայցվորի հայրը կազմակերպել և անձամբ մասնակցել է բնակարանի վերանորոգման, վերակառուցման աշխատանքներին /հատոր 1-ին, գ.թ.74-81, 181-185, հատոր 2-րդ, գ.թ.5-23/:

9. Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող «Արտակ-2003» ՍՊԸ կողմից տրված նախահաշվի համաձայն՝ վիճելի բնակարանի կցակառույցի վրա արված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 8.013.492 ՀՀ դրամ /հատոր 1-ին, գ.թ.108-114/:

10. Դատաշինարարատեխնիկական փորձաքննության արդյունքներով տրված փորձագետի 2014 թվականի հոկտեմբերի 27-ի եզրակացության համաձայն՝ 1. Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանի շուկայական արժեքը 2010թ. հոկտեմբերի 11-ի դրությամբ և առկա ապրանքային վիճակով /բարելավված վիճակով/ գնահատվում է 9.550.000 ՀՀ դրամ: 2. 2010թ.-ից մինչև փորձաքննության իրականացման՝ 14.10.2014թ. ժամանակահատվածը բնակարանում կատարված բարելավումների շուկայական արժեքը կազմում է 6.690.000 ՀՀ դրամ, որից 1.720.000 ՀՀ դրամը բնակարանում կատարված կապիտալ վերանորոգումների ծավալն է, իսկ 4.970.000 ՀՀ դրամը կցակառույցի կառուցման փաստացի կատարված աշխատանքների ծավալն է: 3. Բնակարանի շուկայական արժեքը 2014թ. հոկտեմբերի 14-ի դրությամբ առկա ապրանքային վիճակով /բարելավված վիճակով/ ավելացել է և գնահատվում է 14.330.000 ՀՀ դրամ /առանց կցակառույցի/: Շուկայական արժեքի ավելացման վրա ազդող գործոններից է

կատարված բարելավումները, սակայն տվյալ դեպքում հետազոտելի բնակարանի արժեքի ավելացումը արտահայտված է միայն գնաճով, քանի որ փորձաքննությամբ հնարավոր չէ պարզել բնակարանի ապրանքային վիճակը նախքան կատարված բարելավումները: 4. Կատարված բարելավումների, մասնավորապես կցակառույցի առկայության պայմաններում բնակարանի շուկայական արժեքը աճել է 9.000.000 ՀՀ դրամ գումարով և 2014թ.հոկտեմբերի 14-ի դրությամբ կազմել է 23.330.000 ՀՀ դրամ /հատոր 2-րդ, գ.թ.5-23/:

4.Գերազույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության, քանի որ ստորադաս դատարանների կողմից միևնույն նորմը մեկնաբանվել է տարբեր ձևով, և անհրաժեշտություն է առաջացել մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված ամուսինների ընդհանուր սեփականության, մասնավորապես ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ամուսիններից մեկի գույքի արժեքի ավելացման արդյունքում այդ գույքի նկատմամբ նրանց համատեղ սեփականությունը ճանաչելու ինստիտուտը:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և որոշումը՝ նվիրատվության պայմանագիրը և Ա.Սիլանյանի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու մասով, մասնակիորեն բեկանել և փոփոխել, իսկ մնացած մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ <<յուրաքանչյուր ոք ունի իրավունք, որպեսզի իր գործն արդարացիորեն, հրապարակայնորեն և խելամիտ ժամկետներում քննվի օրենքով հիմնված անկախ և անաչառ դատարանի կողմից, որը որոշում կկայացնի իր քաղաքացիական բնույթի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ...>>:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներին են դասվում իրավունքի ճանաչումը և վիճահարույց գործարքի անվավեր ճանաչումը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ <<1. Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: 2. Մինչև ամուսնությունը ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:...4. Ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը /հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն/, եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:...>>:

Նշված հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ամուսինների միջև կնքված պայմանագրով, ապա ամուսնության ընթացքում ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, իսկ դա նշանակում է, որ ամուսինների բաժինները գույքում որոշված չեն և դրանք ենթադրվում են հավասար: Այսինքն՝ գործում է ամուսինների ընդհանուր գույքի պրեզումպցիան /կանխավարկածը/, որի դեպքում հակառակը ապացուցելու բեռը դրված է այն անձի վրա, ով վիճարկում է նշվածը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրն ամուսինների գույքի օրինական ռեժիմի դեպքում նրանց բաժինները չի առանձնացնում տնտեսական ոլորտում ամուսինների իրավահավասարությունը պահպանելու նպատակով: Ընդհանուր տնտեսություն վարելը, երեխայի ծնվելը ու դաստիարակելը շատ ժամանակ են պահանջում և նյութական բարիք չեն բերում ընտանիք, սակայն պայմաններ են ստեղծվում մյուս ամուսնու աշխատանքային և այլ գործունեության համար: Հետևաբար, նույնիսկ եթե կինը չի աշխատում, վարելով տնային տնտեսություն, ծննդաբերելով ու զբաղվելով երեխայի խնամքով ու դաստիարակությամբ, միևնույն է նա՝ անկախ ընտանիք բերվող իր ֆինանսական վաստակից, ամուսնու հետ համահավասար ձեռք է բերում սեփականության իրավունք:

Այսպիսով, ամուսինները գույքի նկատմամբ հավասար իրավունքներ ունեն նաև այն դեպքում, երբ նրանցից մեկը զբաղված է եղել տնային տնտեսությամբ կամ այլ հարգելի պատճառներով ինքնուրույն վաստակ չի ունեցել:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա/ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը.

բ/ գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը.

գ/ կատարված ներդրման և արժեքի նշանակալի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Գերագույն դատարանը գտնում է, որ ներդրումներ կատարելը կարող է դրսևորվել դրամական միջոցներ տրամադրելով, գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը հանգեցնող բնեղեն միջոցներ տրամադրելով, ինչպես նաև սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնող ամուսնու անձնական աշխատանքի միջոցով, որի արդյունքում առկա դրամական կամ այլ ռեսուրսների հետ միասին իրականացվել է հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն:

Գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը կարող է դրսևորվել գույքի վրա կատարված որոշակի փոփոխություններով, որոնք ավելացնում են գույքի որակական հատկանիշները և, հետևաբար, նաև գույքի արժեքը: Օրենսդիրը, թվարկելով այն գործողությունները, որոնք կարող են հանգեցնել գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը, դրանք սպառիչ չի համարել, ենթադրելով, որ պրակտիկայում կարող են հանդիպել նաև այլ դեպքեր:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գույքի արժեքի ավելացումը նշանակալի լինելու կամ չլինելու հանգամանքը գնահատման ենթակա հանգամանք է, որը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է գնահատի դատարանը:

Կատարված ներդրման և գույքի արժեքի նշանակալի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը համատեղ սեփականության իրավունքի ճանաչման անհրաժեշտ պայմաններից մեկն է, քանի որ գույքի արժեքի բարձրացումը կարող է պայմանավորված լինի այլ գործոններով, այլ ոչ թե ամուսնու կամ ամուսինների կողմից կատարված ներդրումներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկայում հաճախ լինում են դեպքեր, երբ երիտասարդ ամուսինների բարեկամների օգնությամբ, նրանց միջոցներով և ներդրումներով են կատարվում գույքի բարելավումները: Գերագույն դատարանը գտնում է, որ եթե հնարավոր չէ պարզել, թե գույքը կամ միջոցները նվիրված են ամուսիններից մեկին, թե նրանց երկուսին, ապա գործում է ամուսինների ընդհանուր գույքի պրեզումպցիան /կանխավարկածը/, այսինքն՝ այդ գույքը կամ միջոցները համարվում են ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը: Իսկ եթե պարզ է, թե ում շահերից էլնելով է ցուցաբերված օգնությունը կամ տրամադրված են միջոցները /սվեր, ժառանգություն/, ապա դրանք, ըստ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասի, պետք է համարել այն ամուսնու սեփականությունը, ով օրենքով սահմանված կարգով դրանք ստացել է:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ամեն դեպքում, եթե չի էլ հաստատվում, որ ներդրումները կատարվել են հայցվոր ամուսնու հաշվին, պետք է

ենթադրել, որ այդ ներդրումները ընդհանուր գույքի հաշվին են կատարվել, և համատեղ սեփականություն ճանաչելու վերաբերյալ հայցը ենթակա է բավարարման /Եթե իհարկե գործով չէր հաստատվում, որ ներդրումները գույքի սեփականատեր ամուսնու հաշվին են կատարվել/:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ վիճելի բնակարանը ձեռք է բերել պատասխանող Վ.Բաբայանը՝ մինչև հայցվոր Ի.Մելքումյանի հետ ամուսնանալը /նրա պահանջով, ընդ որում, բնակարանի արժեքի 4 մլն դրամը հատկացրել է Ի.Մելքումյանի տատր/, հայցվոր Ի.Մելքումյանի և պատասխանող Վ.Բաբայանի ամուսնությունից հետո վիճելի բնակարանում կատարվել են վերանորոգման աշխատանքներ և կառուցվել է կցակառույց: Ընդ որում, նշված աշխատանքների համար հայցվորի մայրը տրամադրել է 800.000 ՀՀ դրամ, իսկ հայրը կազմակերպել և անձամբ մասնակցել է վերանորոգման, վերակառուցման աշխատանքներին: Ամուսնության ընթացքում տատից վերցրած 4 մլն դրամը վերադարձվել է: Դատաշինարարատեխնիկական փորձագետի եզրակացությունից հետևում է, որ վիճելի բնակարանի արժեքը կողմերի ամուսնության ընթացքում վերանորոգման և վերակառուցման արդյունքում նշանակալի չափով ավելացել է:

Վճռաբեկ բողոքում ևս չի վիճարկվում, որ կողմերի ամուսնության ընթացքում վիճելի բնակարանում կատարվել են վերանորոգումներ, կցակառույց է կառուցվել, որի աշխատանքները դեռ ավարտին հասցված չեն:

Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 23-ի վճռով մերժելով հայցը, միաժամանակ հաստատված համարելով, որ բարելավումներով պայմանավորված վիճելի բնակարանի արժեքն աճել է նշանակալի չափով, պատճառաբանել է, որ վիճելի բնակարանի նկատմամբ չի կարող ճանաչվել հայցվորի համասեփականության իրավունքը, քանի որ Վ.Բաբայանը չի հանդիսանում բնակարանի սեփականատերը /այն օտարել է մորը՝ Ա.Սիլանյանին/, և որ հայցվորը չի ապացուցել իր անձնական կամ իր և պատասխանող Վ.Բաբայանի ընդհանուր գույքի հաշվին կցակառույցի կառուցման հետ կապված ծախսերի կատարման փաստը, որպիսի պայմաններում բացակայում են ամուսիններից մեկի գույքը ամուսինների համատեղ սեփականություն ճանաչելու իրավական հիմքերը /հատոր 2-րդ, գ.թ.189/: Մինչդեռ նման դիրքորոշումը հակասում է Գերագույն դատարանի՝ ամուսինների ընդհանուր գույքի կանխավարկածի վերաբերյալ սույն որոշումում նշված պատճառաբանություններին:

Ի դեպ՝ բողոքաբերը չի խնդրել օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի վճռին, հետևաբար համաձայն չէ դատարանի նման հետևություններին:

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ հայցվորը և պատասխանող Վ.Բաբայանը գտնվում են ամուսնության մեջ, որ Վ.Բաբայանին պատկանող վիճելի բնակարանում ամուսնության ընթացքում հայցվորի և Վ.Բաբայանի ընդհանուր միջոցների հաշվին՝ հայցադիմումում նշված ներդրումներ են կատարվել, որ կատարված ներդրումների արդյունքում վիճելի բնակարանի

արժեքը նշանակալի չափով ավելացել է, որ կատարված ներդրումների և վիճելի բնակարանի արժեքի նշանակալի չափով ավելացման միջև առկա է պատճառահետևանքային կապ, և որ վիճարկվող պայմանագրով և պետական գրանցմամբ խախտվել են հայցվորի իրավունքները:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ մեկնաբանելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասը, որը կիրառելի է սույն գործով հայցվոր Ի.Մելքումյանի և պատասխանող Վ. Բաբայանի միջև ունեցած իրավահարաբերությունների նկատմամբ, ճիշտ որոշելով գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, պատշաճ գնահատական տալով ներկայացված ապացույցներին, հիմնավոր է հանգել այն հետևության, որ հայցվոր Ի.Մելքումյանի համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջն իրավաչափ է և ենթակա է բավարարման:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով առավելագույնս պետք է պաշտպանված լինեն վեճի կապակցությամբ ծագած իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների օրենքին չհակասող իրավունքները և շահերը:

Ինչպես հետևում է գործի նյութերից, հայցվոր Ի.Մելքումյանը և պատասխանող Վ.Բաբայանը միասին չեն բնակվում, Վ.Բաբայանը գտնվում է ՌԴ-ում: Վ.Բաբայանը, նվիրելով իրեն պատկանող գույքը մորը՝ պատասխանող Ա.Սիլանյանին, դրանով արտահայտել է իր կամքն իրեն պատկանող սեփականության ճակատագրի նկատմամբ: Հաշվի առնելով, որ հայցվորի հիմնական պահանջը բավարարելով նրա խախտված իրավունքները վերականգնվում են, նվիրատվության պայմանագիրը և պետական գրանցումը այլ հիմքերով չեն վիճարկվել /հայցադիմումում դրանք վիճարկվում են հայցվորի իրավունքների խախտման հիմքով/, Գերագույն դատարանը գտնում է, որ նշված ակտերը պետք է անվավեր ճանաչվեն ոչ թե լրիվությամբ, այլ միայն վիճելի բնակարանի այն մասով, որը /օրենքի ուժով/ պատկանում է հայցվորին:

Գերագույն դատարանը նման հետևության է հանգում ելնելով հետևյալից.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, որում, ըստ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերի, պետք է նշվեն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները և հայցապահանջները հաստատող ապացույցները:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփական անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության,

խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանք դատական պաշտպանության սկզբունքների վրա....:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ, ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքում համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար: Հետևաբար, հայցվորի բաժինը կազմում է բնակարանի 1/2 մասը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 316-րդ հոդվածի համաձայն՝ գործարքի մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս մասերի անվավերության, եթե գործարքը կարող էր կնքվել նաև առանց անվավեր մասը նրա մեջ ներառելու:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասը հնարավորություն է ընձեռում վարչական ակտն անվավեր ճանաչել մի մասով, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Վերոնշյալ պատճառաբանությունների լույսի ներքո անդրադառնալով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների սխալ կիրառման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, Գերագույն դատարանը դրանք համարում է անհիմն:

Այսպես, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ 1.Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: 2.Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման համար վերոնշյալ երեք վավերապայմանների առկայությունը կարող է հիմնավորվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածով նախատեսված ապացույցներով՝ հաշվի առնելով դրանց թույլատրելիության և վերաբերելիության կանոնները:

Գերագույն դատարանի վերը նշված պատճառաբանություններից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը հիմնական պահանջը բավարարելիս ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների խախտում թույլ չի տվել:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը գնահատման չի արժանացրել Ստեփանակերտի քաղաքապետի թիվ 332 առ 18.09.2014թ. Ա.Սիլանյանին տրված շինարարության թույլտվությունը /որով Ա.Սիլանյանին թույլատրվել է երկարաձգել կցակառույցի շինարարության ժամկետը

մինչև 18.09.2016թ./, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ նախ՝ նշված թույլտվությունը տրվել է դատարանում սույն գործը հարուցելուց հետո, երկրորդ՝ այն չի խոչընդոտում ո՛չ գործի քննությանը, ո՛չ էլ կցակառույցի կառուցման աշխատանքները ավարտին հասցնելուն:

Առարկելով, որ վիճելի բնակարանի արժեքը բարձրացել է հայցվորի ներդրումներով և վկայակոչելով կցակառույցը գրանցված չլինելու հանգամանքը, բողոքաբերն որևէ հերքող ապացույց չի բերել՝ դրանով անտեսելով ամուսինների ընդհանուր համատեղ գույքի կանխավարկածի վերաբերյալ օրենքի պահանջը: Բողոքաբերն որևէ ապացույց չի ներկայացրել նաև դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացության ոչ արժանահավատ լինելու վերաբերյալ: Անհիմն է նաև բողոքի այն փաստարկը, որ հայցվորի սեփականության իրավունքը ճանաչվել է չավարտված կցակառույցի նկատմամբ, քանի որ կցակառույցը չի հանդիսանում որևէ առանձին միավոր, այլ կազմում է վիճելի բնակարանի մի մասը, և դեռ պարզ չէ, թե դրա կառուցումն ավարտին հասցնելու համար որքան միջոցներ կծախսվեն: Վերաքննիչ դատարանը իր որոշման մեջ որևէ հատուկ նշում չի կատարել դրա վերաբերյալ: Բացի դրանից, և նվիրատվության պայմանագիրը, և սեփականության իրավունքի գրանցումը կատարվել են 58.22 քմ մակերես ունեցող վիճելի բնակարանի նկատմամբ: Ուստի, անհիմն են նաև բողոքի փաստարկները «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտման մասին:

Բողոքում չեն հիմնավորվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 172-րդ, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 86-րդ հոդվածների պահանջների խախտման մասին փաստարկները, հետևաբար Գերագույն դատարանը դրանց չի անդրադառնում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու Գերագույն դատարանի լիազորությունը, քանի որ բացակայում է գործի նոր քննության անհրաժեշտությունը, ու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով, որ սույն գործով դատական ծախսերը բաղկացած են պետական տուրքից և փորձաքննության հետ կապված ծախսերից, իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի

1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ հայցվորը վճարել է իր միջնորդությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը, պատասխանողներից հոգուտ հայցվորի իրավամբ բռնագանձել է հայցադիմում և երեք անգամ վերաքննիչ բողոքներ ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումարը՝ 42.000 ՀՀ դրամ: Գերագույն դատարանը, հաշվի առնելով, որ վճարեկ բողոքը մասնակիորեն բավարարվում է, իսկ վճարեկ բողոքի համար պատասխանողները վճարել են 20.000 ՀՀ դրամ, գտնում է, որ հայցվորից հոգուտ պատասխանողների պետք է բռնագանձվի 10.000 ՀՀ դրամ: Հետևաբար, հաշվանցման եղանակով վերջնականապես պատասխանողներից հայցվորի օգտին ենթակա է բռնագանձման 32.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256 -րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Պատասխանողներ Աշխեն Սիլանյանի և Վաչե Բաբայանի ներկայացուցիչ Ա. Մադաթյանի վճարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը՝ նվիրատվության պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու մասով, մասնակիորեն բեկանել և փոփոխել: Իննս Բեհբուդի Մելքումյանի հայցը բավարարել մասնակիորեն. Վաչե Վալերիի Բաբայանի և Աշխեն Վոլոդյայի Սիլանյանի միջև 2013 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանի նվիրատվության պայմանագիրը և 2013 թվականի հոկտեմբերի 15-ին ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-6 մատյանի 154795 համարի տակ կատարված Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 46 շենքի թիվ 12 բնակարանի նկատմամբ Աշխեն Վոլոդյայի Սիլանյանի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչել բնակարանի 1/2 մասի նկատմամբ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Պատասխանողներ Վաչե Բաբայանից և Աշխեն Սիլանյանից համապարտության կարգով հոգուտ Իննս Մելքումյանի բռնագանձել 32.000 /երեսուներկու հազար/ ՀՀ դրամ՝ վճարված պետական տուրքի դիմաց:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ